

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները 7 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միայն խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տոն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնները համար վճարում են
խաւքանչիւր բառին 2 կոպեկ.

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱԳԻԼԻԻ ԿՈՂՄԻՏ

Թիֆլիսի քաղաքային վարչութեան մէջ ընդունվում են նուիրատուութիւններ օգ-
նելու խօշորայով հիւանդացած, կամ խօշորայից մեռած մարդկանց աղքատ ընտանիքնե-
րին: Հաւաքած փողերը, քաղաքագլխի ղեկավարութեամբ, սանիտարական խմբերը կը բա-
ժանեն կարօտեալներին, ըստ չափու կարօտութեան, և հանգամանքներին նայած օգնու-
թիւնը կը լինի ինչպէս փողով, այնպէս և անհրաժեշտ իրեղէններով: 1—3

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պաշտօնական տեղեկու-
թիւններ խօշորայի մասին. խօշորայով վարակման
նպատակով պայմանները. Որվայ չարիք. Բարեգոր-
ծական ընկերութեան որոշումը. Նամակ խմբա-
գրին. Նամակ խմբագրին. Նամակ խմբագրին. Նա-
մակ խմբագրին. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՐԻՆ ՏԵ-
ՍՈՒԹԻՒՆ. Լրագրական հետաքրքրաշարժ դատ.
Արտաքին լուրեր.—ՀԵՌԱՎԻՆՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒ-
ԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Երևանի առողջա-
պան դրութիւնը.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՐԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԽՈՒՆԴԱՅԻ ՄԱ-
ՍԻՆ

Երևանի քաղաքային վարչութեան տը-
ւած տեղեկութեան համաձայն, յուլիսի 12-ին
Շուշի քաղաքում հիւանդացել են 4, առողջացել
են 3, մնացել են 26, գաւառում հիւանդացել են
67, առողջացել են 25, մնացել են 34, մնացել են
12. Երևանի քաղաքում հիւանդացել են 23,
առողջացել են 6, մնացել են 21, մնացել են 21.
Նուրի քաղաքում հիւանդացել են 26, առողջա-
ցել են 2, մնացել են 19, մնացել են 20. գաւա-
ռում հիւանդացել են 2, մնացել են 2, մնացել են
2 հոգի: Զեքրայիլի գաւառում նոր հիւանդացող-
ներ չը կային: Զեկանչիլի գաւառում հիւանդացել
են 25, առողջացել են 2, մնացել են 13, մնացել
են 22, առողջացել են 4, մնացել են 23, մնացել
են 4 հոգի: Ղազարի գաւառում հիւանդացել է 1,
մնացել են 2 հոգի: Երևանի քաղաքում և Արեւի գա-
ւառներէն տեղեկութիւններ չեն ստացված: Ընդա-
մենը նախնական մնացել են 116 հիւանդներ:

Վաղատանի չըման զինուորական նախնա-
պետը հաղորդում է, որ յուլիսի 12-ին Պետրոսի
քաղաքում հիւանդացել են 4, մնացել են 4 հոգի:
Գերբէնք քաղաքում հիւանդացել են 5, մնացել են
3 հոգի: Շրջաններում հիւանդացել են 254, մն-
ացել են 133, առողջացել են 29 հոգի. մնացել
են հիւանդներ՝ Պետրոսիւկում 31, Գերբէնքում 4.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ԱՌՈՂՋԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ

Այսօր երբ ամբողջ կողմաւ խօշորայի երեւա-
նու պատճառով սարսափի մէջ է, երբ այդ հի-
ւանդութիւնը այսօր հարկւններով զոհեր է տա-
նում մեր բարեմասնող քաղաքներէն, Երևանը հա-
կառողջապահական իր ամենատարբեր դրութիւնով
ուշինք չէ յիշում, և զրկաբաց սպասում է ընդու-
նելու սարսափելի հիւանդութիւնը: Շրջերը սար-
սափելի են, ջրերը պղտորվել, փայցել են, իսկ
քաղաքի շատ տեղերում ամենին ջուր էլ չը կայ,
փողոցները աղբից և թողելու աղբակամով են,
մրդերը հասել են և օր օրի փութացնում են խո-
շորայի մեղ մօտ մուտք գործելուն, բայց ոչ
չէ մտածում դրա մասին, ոչ որ հոգ չէ տանում
դրա առաջն առնելու: Այն ժամանակ երբ Բա-
ղուն ամսական 300 ռ. ուճիկով բժշկներ է
հրաւիրել, այն ժամանակ երբ Թիֆլիսի դուռն
մօտ յիսուն հազար ռուբլի յատկացրել է 11
բժշկական խմբեր կազմակերպելու այդ աղետի
առաջն առնելու համար, այն ժամանակ երբ Երե-

ւանդներում կիրքնեան 144, կայտադո-Տար-
տարանեան 47, Սամուրեան 113, Գարգինեան 27,
կաղիկումուխեան 22, Թէմիր-Շուրայեան 139
և Գոմիքեան 1 հոգի:

Երևանի նախնապետը հաղորդում է, որ յու-
լիսի 12-ին Նախիջևան քաղաքում կային 8 հի-
ւանդներ, կրկին հիւանդացել են 46, մնացել են
17, առողջացել են 6, մնացել են 31. գաւառում
հիւանդացել են 12, մնացել են 2, առողջացել են
3, մնացել են 7 հոգի:

Բաղուի նախնապետի իշխանութեան տուած
տեղեկութեան համաձայն, յուլիսի 13-ին Բաղուի
խօշորային հիւանդանոցն են մտել 11, մնացել են
3, առողջացել են 5, մնացել են 85. հիւանդա-
նոցից դուրս մեռել են 6 հոգի: Նախնապետ հի-
ւանդացել են 144, մնացել են 109, առողջացել
են 42, մնացել են 127 հոգի: Զինուորական հի-
ւանդանոցը մտել են 2, մնացել է 1, մնացել են
31 հոգի: Բաղուի բանտում առողջացել են 3,
մնացել են 5 հոգի:

Փոթիայի զինուորական նախնապետը հա-
ղորդում է, որ յուլիսի 13-ին Փոթի քաղաքում
խօշորայից մեռաւ Անակիլից եկած մի թուրք:

Թիֆլիսի Միքայէլեան հիւանդանոցում յուլիսի
15-ին առաւօտեան խօշորայով հիւանդներ կային
25 տղամարդիկ և 6 կանայք. օրվայ ընթացքում
յուլիսի 15-ին առաւօտեան 3 տղամարդիկ՝ կէրէտ-
վիլի (վեռցիլի գործատուն, 10-դ քաղ.), Գու-
րեանց (չերամպայանական կայարան Մուշաթիւում,
10-դ քաղ.) և Մարգար-օղլի (Մէշէղից եկած).
ցերեկով հիւանդանոցից դուրս գնացողներ չը կա-
յին. յուլիսի 15-ին զիշիլայ ընթացքում առաւ-
ցել է 1 տղամարդ—կալուլին (տ. Թայրիօլի, 8-դ
քաղ.), մնացել է 1 տղամարդ—կերէտիլ-չիլիլի. յու-
լիսի 16-ին առաւօտեան Միքայէլեան հիւանդա-
նոցում խօշորայով հիւանդներ կային 28 տղամար-
դիկ և 6 կանայք:

Պարսից ժամանակաւոր խօշորային հիւանդանո-
ցում յուլիսի 15-ին առաւօտեան կային 2 հի-

ւանդ դուռն էլ այժմ 20,000 ռ. յատկացրել է,
քաղաքը չորս մասի բաժանելով, բժշկական
խմբեր կազմակերպելու, քաղաքը մաքրելու և բո-
ւր միջոցները ձեռք առնելու, որպէս զի խօշ-
որան մեղ մօտ էլ չը տարածվի, այսօր այդ ամբողջ
քաղաքը մասնավոր է տրուել ֆելդշէրների ձեռքը,
և 16,000 հոգու վիճակը կախված է այդ մարդ-
կանցից: Եւ ցաւալին այն է, որ մեր քաղաքի վա-
րիչները, որոնք վարանում են պրօֆէսորների կար-
ծիքը ընդունելուց (ինչպէս օրինակ Օրէսայի
պրօֆէսոր Վերիբոյի եղբայրացիութիւնը «Մարա-
աղբիւրի» ջրի պլումանի լինելու մասին, որը
պէտք է քաղաքը բերվի, բայց մինչև այժմ ուղ-
րական դուռնային հարց չէ առաջարկում) այսօր
անպայման հաւատում են այդ ֆելդշէրներին, ու-
րոնք էլ շատ ճարպիկ կերպով դրան իրանց հին
հաշիւները խօշորայի սարսափի տակ մաքրելու,
իսկ զբաղւելով մէկը արդէն յայտնի է սրանից մի
երկու տարի առաջ իր պրօֆէսորներով քաղաքա-
ցիներին անմիջ տեղը հաղարներ տուգանքի են-
թարկելով:

Խօշորայի այս սարսափի ժամանակ, երբ հար-
կաւոր է մեր քաղաքի կենտրոնում—քաղաքապա-
նեում, քաղաքներում տարիներով հաւաքված
աղբը դուրս տանել, երբ քաղաքը մի օր է և

անդներ, ցերեկով առաւօտեան 2 հիւանդներ և մե-
ռաւ 1 հիւանդ. առաւօտեան յուլիսի 16-ին խօշ-
որայով հիւանդներ կային 3 հոգի:

Միքայէլեան հիւանդանոցից դուրս յուլիսի 13-ին
հիւանդացել է Երեմի Գանիմեանց, 18 տարեկան,
(Գիւղումէ), ուղարկված է երկաթուղային հիւան-
դանոցը: Առողջացել են տանը բժշկվողներ՝ Աննա
կալիւօլա (Սուրբ-Կարապետեան փողոց, տ. Ե-
ւանդուլի) և Բախիլ Պէյրախովիչ (Նովո-Արսե-
նաշայա փողոց): Վերջին օրերի ընթացքում մե-
ռել են տանը բժշկվող հիւանդներ՝ Աննա Ասար-
տակ, Աննա Կալիւօլա, Կանո Սարգիսով, Սամա-
րայի նախնայի գիւղացի Եփիմ Ֆելդիլին, Վասի-
լի Լեբեդով, Գաւիլ Աղամբա, Սերգէյ Անապու-
մով և կալանաւոր Բաֆայէլ Կէշանց:

Մշակի գաւառապետը հաղորդում է, որ Յարսիլի-
կոյցի գիւղում խօշորայից մեռել են 4 և հիւան-
դացել են 3 հոգի: Գաղթականները առանձնացած
են: Վախիլի գիւղում մեռել են 4 հոգի: Թիֆլիսի գա-
ւառի Ալեքսանդրէրօրֆ կոնսիսայում հիւանդացել
են 2 տղամարդիկ և 1 կին: Գօրու գաւառի Ուրբիսի
գիւղում կրկին հիւանդացել են 4, մնացել են 3
հոգի: Թիֆլիսի գաւառի Գիւղի գիւղում խօշորա-
յից հիւանդացել և մեռել է Թիֆլիսից վերադար-
ձած Մօսէ Ժուրովի. մեռածի բնակարանում դէ-
ղինֆէլցիա է կատարված:

Երևանի քաղաքային վարչութեան հաղորդում է, որ յու-
լիսի 13-ին Շուշի քաղաքում հիւանդացել
են 4, առողջացել են 6, մնացել են 3, մնացել են
21. գաւառում հիւանդացել են 116, առողջացել
են 12, մնացել են 28, մնացել են 82. Երևանի քաղա-
քում հիւանդացել են 25, առողջացել են
12, մնացել են 6, մնացել են 23 հոգի: Նուրի
քաղաքում հիւանդացել են 20, առողջացել են 2,
մնացել են 22, մնացել են 15. գաւառում հիւան-
դացել է 1, մնացել է 1, մնացել են 2. Զեքրայիլի
գաւառում հիւանդացել են 2, առողջացել է 1,
մնացել է 1, մնացել են 2 հոգի: Զեկանչիլի
գաւառում հիւանդացել են 22, առողջացել են 5,
մնացել են 12, մնացել են 34. Արեւի գաւառում
հիւանդացել են 6, մնացել են 7, մնացել են 15.
Ղազարի գաւառում նոր հիւանդացողներ չեն ե-
ղել: Երևանի քաղաքի գաւառում հիւանդացել են
81, առողջացել են 8, մնացել են 25, մնացել են
45 հոգի: Զանգեզուրի գաւառից տեղեկութիւն-
ներ չեն ստացված. ընդամենը նախնապետ հի-
ւանդներ կային 244 հոգի:

Վաղատանի նախնապետը հաղորդում է, որ

Մաշադի Զաֆարի պատճառով առանց ջրի այր-
վում է, և այդ այն ժամանակ, երբ քաղաքը «Ա-
րուհայիթ» ջրի վրա տանեակ հաղարներ է
ծախել, որպէս զի քաղաքի այգիները ջրվին,
բուսականութիւնը զարգանայ, փողոցները ջրվին
և դրանով այգիների արեւի ժամանակ քաղաքը
անվտանգ մնայ և երբ պէտք է այգիների մարդ-
կանց կամայականութեամբ առաջն առնել, երբ
թուրք բեգերի և խաների, նաև թուրքերի թաղե-
րի սարսափելի անհաղթելիութիւնը պէտք է դուրս
տանել, որ առաջ սանիտարական բժիշկներ, զիշի-
ֆէլցիայի համար զեղեր բերել տալ, այսօր մեր վա-
րիչները ժողովրդի աչքը թող փնտրել համար մաքուր
մեղ մօտ ինքը մարդկանց, ի հարկէ հայերի,
վրա դրողութեամբ են, անպատու, առանց մտա-
ծելու անգամ, որ խօշորայի առաջը գործողութիւն
հայտնաբերվում առնել չէ կարելի. հարկաւոր է խե-
ղացի և տոկոս գործունէութիւն: Ինչպէս ամէն
տեղ, այնպէս էլ Երևանում հայերի թաղե-
րը առնել մաքուր են, համապատասխան սանի-
տարական պահանջներին, իսկ թուրքի թաղերը
այնպէս աղտոտ են, այնպիսի զարգացողութիւն
են արձակում, որ մարդ առանց քիթը բռնելու
չէ կարող անցնել, իսկ այսօր մեր սանիտարա-
կան բաժնիների կողմից առնել ճշմարտ, առնել

յուլիսի 13-ին Պետրոսիւկում հիւանդացել են 11,
մնացել են 2 հոգի. Գերբէնքում հիւանդացել են
13, մնացել են 7 հոգի. չըմաններում հիւանդացել
են 313, մնացել են 160, առողջացել են 70.
մնացել են հիւանդներ՝ Պետրոսիւկում 40, Գեր-
բէնքում 10, չըմաններում՝ Կերբէնքեան 162,
կայտադո-Տարտարանեան 47, Սամուրեան 115,
Գարգինեան 19, կաղիկումուխեան—48, Թէմիր-
Շուրայեան 204, Գոմիքեան 1, և Ալարեան
2 հոգի:

Երևանի նախնապետը հաղորդում է, որ յու-
լիսի 13-ին Նախիջևանում հիւանդներ կային 31,
հիւանդացել են 22, մնացել են 10, առողջացել
են 16, մնացել են 27. գաւառում կային 7, հի-
ւանդացել են 20, մնացել են 11, մնացել են 16
հոգի:

Ստալիսկոյի նախնապետը հաղորդում է, որ
Ալեքսանդրովի գաւառի կուրսակի գիւղում
յուլիսի 11-ին խօշորայով հիւանդացել է 1, մնացել
է 1, կուրսակիւկում յուլիսի 12-ից հիւանդացել
են 6, մնացել են 3. Նովոգործկովի գաւառի
Պրասկովա գիւղում 13 հոգի. յուլիսի 14-ին
հիւանդացել են 22, մնացել են 7 հոգի:

Երևանի նախնապետը հաղորդում է, որ յու-
լիսի 12-ին խօշորայի քաղաքում հիւանդացել
են 7, մնացել են 5, մնացել են 2 հոգի: Յուլիսի
14-ին Նախիջևանում կային 27, հիւանդացել են
28, մնացել են 9, առողջացել են 5, մնացել են
հիւանդներ 41 հոգի. գաւառում կային 16, հի-
ւանդացել են 27, մնացել են 17, առողջացել են
4, մնացել են հիւանդներ 22 հոգի:

Բաղուի նախնապետը հաղորդում է, որ յու-
լիսի 14-ին Բաղուի խօշորային հիւանդանոցը
մտել են 3, մնացել են 4, առողջացել են 12,
մնացել են 72 հոգի: Հիւանդանոցից դուրս մեռել
են 4 հոգի: Նախնապետ հիւանդացել են 78, մե-
ռել են 42, առողջացել են 25, մնացել են 61.
զինուորական հիւանդանոցում առողջացել են 3,
մնացել են Բաղուի բանտում 2, առողջացել են 3,
մնացել են 2 հոգի:

Վաղատանի նախնապետը հաղորդում է, որ
յուլիսի 14-ին Պետրոսիւկում հիւանդացել են 24,
մնացել են 8, Գերբէնքում հիւանդացել են 8, մե-
ռել են 2, առողջացել է 1 հոգի. չըմաններում

հաղածված հայերն են, իսկ թուրքերը այնպէս
թողնված են իրանց կամքին. և այդ շատ հասկա-
նալի է. մէկը Մաշադի-Զաֆարի բարեկամն է,
միւսը Քաղաքապետ-Նուրի, երբեք չափ-Արաբի
քրոջ օրդին է, և չորրորդը բարեկամ խանի ծա-
ւան է և այլն և այլն: Ահա ինչ դրութեան մէջ է
մեր քաղաքի սանիտարական դրութիւնը: Մեղմանում
օգտվելով խօշորայի գաղութատի բարեկամական
հաշիւներն են մէջ բերում, ուսպակայի ծառայող-
ներին և այն էլ ընդունակներին են հեռացնում:

Երբ հայը է բարձրանում, որ այս ինչ թուրքին
պէտք է ստիպած, որ ջուր տալ քաղաքացիներին,
այն ինչ խանին, որ մաքուր պահի իր կալ-
ւածքները և այլն, ցատախանում են. «խօս
նրանք անպատիւ չեն, զիմեցեք ոտովիստացե-
տին, նախնապետին» և այլն: Իսկ երբ մի օր է
է հայի բազում, կամ խանութում մի առնել
կամ խոտի կտոր է ընկած, իսկայն գործողութիւն
հայտնաբեր, պրօֆէսոր, ֆելդշէրներ, տուն և խա-
նութ փակելու սպառնալիք և այլն: Ահա մեր
քաղաքը ինչ դրութեան մէջ է:

Արդէն մեղ մօտ էլ հասել են Բաղուի հիւանդ-
անոց էլ ինչպէս Թիֆլիսին, Շուշիին, Նովոսե-
պատում է այդ անոցն հիւանդ, բայց բոլորը
քնած են, ոչ որ ոչինչ չէ ուղում անել և եթէ

բուրժուական, որոնք հաւանական են թէյաւաններին հա-
մար, և որոնք հազիւ թէյաւաններին են բաւա-
կան...

Այդ դեռ բաւական չէ: Միտք է յղացել օգնել
խօսքերից վնասված ընտանիքներին, անտէր,
անօգնական մնացած որբերին, այդինքն: Իսկ
զրանց թիւը մեծ է, և էլի աւելի կը մեծանայ,
որովհետեւ անիծեալ հիւանդութիւնը իր ճանկերը
մէջ է առնում զխաւարապէս այն դասակարգը,
որը քաղցած և անօգնական է...

Դրա համար էլ փող է հարկաւոր: Եւ չը նա-
յած այդքան պահանջներին, հասարակական հան-
գանակութիւնը թիֆլիսում դեռ ողի չէ առնում:
Թող հարուստները չը միտնեն իրանց այդ յոյ-
սով, թէ «խօսքերն աղքատներին է կոտորում»:

Մի գեղեցիկ օր սարսափելի ակտը դուրս գալով
աղքատի խրճիթից՝ մուտք կը գործի հարեան
ապարանքի մէջ, և այն ժամանակ՝ այլ ևս
փրկութիւն չը կայ:

Օգնեցէք դուք, պարոններ դրամատէրեր, ձեր աղ-
քատ հարեաններին փողով, հացով, —եթէ չէք ու-
զում, որ նրանք չնորհալարութեան և երախտապե-
տութեան փորձարէն մի օր ձեզ ուղարկեն խօշորս
և ժանտախտ...

Խ. Մ.

ԲԱՆԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ

Ժողովրդական մեծ աղետը մի կողմից, և մեր
ուսողական մամուլը՝ հրաւերը միւս կողմից՝ դըր-
եցին կոմիտեան հայոց Բանեգործական ընկե-
րութեան խորհրդին՝ օգնութեան ձեռք մեկնելու:

Հաստատ աղբիւրից արդէն գիտենք, որ ընկե-
րութեան խորհուրդը սկզբունքով իր պահանջի
գումարից որոշել է 5,000 բուրձի տալ՝ խօշորսից
վնասվածներին օգնելու համար:

Դա մի պատկառելի դրամար է: Առաջիկայ չո-
րեքշաբթի, ամսիս 22-ին, հրաւիրվում է ընկերու-
թեան արտակարգ նիստ՝ այդ խնդիրը քննելու
համար:

Անխաղած, ընդհանուր ժողովը սիրով ընդու-
նելով խորհրդի առաջարկը, մի և նոյն ժամանակ
կը ծրագրի այդ դրամարի գործադրութեան եղա-
նակը:

Անխաղած գումարի մի նշանաւոր մասը պէտք
է արվի գաւառներին, միւս մասը գործադրելով
թիֆլիսում:

Մեր կողմից առաջարկում ենք թիֆլիսում Բանե-
գործական ընկերութեան անունով բանալ ձրի
ճաշարան:

Քաղաքում արդէն կան թէյաւաններ: Հիւանդնե-
րին օգնելու համար քաղաքային վարչութիւնն է
հանգանակութիւն սկսել: Միտք է այժմ հոգալ
մի ուրիշ կարևոր խնդրի մասին, —այն է ձրի
ճաշարաններ հիմնելու մասին, և Բանեգոր-
ծական ընկերութիւնը մի շօշափելի գործ կատա-
րած կը լինի, եթէ հիմնի մի քանի ամսով մի
մեծ ճաշարան, որտեղ օրը 300 մարդ կարողանա-
յին ստանալ համեստ, բայց թարմ կերակուր:

Դա նշան իրադրութիւն բան է: Հարկաւոր է մի-
այն կամք և եռանդ:

այդ գործին մասնակցեն զխաւարապէս Հաւա-
քարում ապրող երկու սեռի ինտելիգենտ անձինք:

Այդպիսի մարդիկ հարկաւոր են նոյնպէս և
Ալեքսանդրեան այգու և Մէլիքանի թէյաւանների
համար:

Խ. Մարտիան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Վարդիկալկազ, 7 յուլիսի

Հաճեցէք, մեծապատիւ խմբագիր, մի անկիւն
չնորհել երկրորդ դրութեան ձեր պատուական
լրագրի մէջ, «Մշակ»-ի № 75-ի մէջ Վարդիկալ-
կազից հաղորդած երկու անձինք լուրերի առի-
թով:

Կան անբարեխիճ, այն էլ պատահական թղթա-
կիցներ, որոնք մուրեքներով խմբագրին, արհեստ
են չինել, իրանց ստոր նպատակները առաջ տա-
նելու համար խեղաթիւրել փաստերը և այդպիսով
յաղգնել անձնական անգուցնելի կրքերը: Այդ
տեսակներին է պատկանում անշուշտ և Վարդի-
կալկազի լրատու: Լրատուները, որ ուսուցիչի-
նեղը ինձ դիմելով ուժեղի համար՝ իբր թէ ես պա-
տասխանել եմ «անհրաժեշտ» և փող չու-
նիմ, այդ տեսակ բան ամենին ասած չեմ:
Նախ՝ ես աներ չունեմ, այլ մի փոքր տուն, և
նրա նորոգութիւնը իմ մասնաւոր գործ է և վե-
րաբերում է միայն իմ անձնական շահերին, հա-
շիւներին, և ամենին կապ չունի ուսուցիչների
ուժեղ չը ստանալու հետ:

Եւ իբրեւ զայդ, դպրոցական ոչ մի դրամական հա-
շիւ չը կայ ձեռքումս, այս երկու տարի է, ինչ
զանազան է հոգաւարածու Պ. Յ. Հալալբեկեանը,
որը բացակայ է: Երկու տարի առաջ, ճիշդ է,
վարել եմ գանձապահութիւնը և ուսուցիչները
լիով բաւականութիւն են ստացել միշտ. պատա-
հել է, որ շատ անգամ առաջուց են վերցրել ինձա-
նից ուժեղները:

Եւ իբրեւ զայդ, երբեք էլ բացի նախագահական
պաշտոնի կատարելուց, նոյնպիսի ուսուցիչ եմ
ինչպէս և միւսները. դեռ նրանք ամառվայ ուժեղ-
ներն էին պահանջում, իսկ ես չէի ստացել նոյն
իսկ ապրիլ և մայիս ամիսներին ուժեղները, ու-
րեմն իմ կողմից ոչ մի արգելք երբեք չէր կարող
լինել ուժեղները ստանալու:

Գալով այն լուրին, թէ եկեղեցում հրդեհ է
պատահել, անցքը այսպէս է եղել՝ ձեռքով խօսա-
կալից յետոյ տիւրքացաների անգղաւորութեամբ
այդտեղ են հին գեղատները, իսկ նորերը և աւե-
լի թանգարանները սեղանի վրա էին միշտ պահ-
պանվում և բոլորովին աղաւթված են հրդեհից:

Գործակալ և նախագահ հոգաւարածութեան՝
քահանայ Պետրոս Կուսիկեանց.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Զուշի, 6 յուլիսի

«Մշակ» № 73-որդ համարում տպագրված է
մի նամակ, որի հեղինակը ուզում է հերքել մեր
«Մշակ» 67-որդ համարում տպագրված այն
լուրը, թէ «քաղաքը վերին աստիճանի կեղտոտ
գրութեան մէջ է գտնվում, մանաւանդ թուրքերի
թաղը»: Մենք չենք կամենում հաստատել մեր ա-
սածը, քանի որ բնականաբար Տէր-Գրիգորեանց
շուտով ցոյց կը տայ «Մշակ» մէջ, թէ որքան
քաղաքի թուրքերի թաղը մաքրութեան կողմից
գտնվում է օրինակելի գրութեան մէջ... Մի-
այն մի կէտի մասին պէտք է մի երկու խօսք
տանք: Հերքել ցանկացող պարոնը ասում է, թէ
թուրքերի թաղը աւելի մաքուր է հայերի թաղից,
և այդ հաստատելու համար ասում է, թէ թուր-
քերի թաղում խօշորսով վարակվածներ չը կան,
իսկ հայերի թաղում կան և թէ այդտեղ այդ հի-
ւանդութիւնը ընդունել է և կընդունի սուր ընա-
ւորութիւն: Որ թուրքերի թաղում սկզբում խօշ-
որսով վարակվածներ չեն եղել, —այդ շատ բնա-
կան է, քանի որ խօշորսն Զուշի բերել են Բա-
ղուց եկողները, իսկ Բաղուց եկողները միայն
հայեր են: Իսկ այժմ, երբ թուրքերի թաղում էլ
կան վարակվածներ, այնտեղ քանի գտնւմ է, հի-
ւանդութիւնը աւելի է սաստկանում, իսկ հայերի
թաղում զգալի կերպով նուազել է: Այս երևոյթը
ինչով բացատրել. նրանով որ թուրքերի թաղը
մաքրութեան կողմից օրինակելի գրութեան մէջ
է գտնվում...:

Տ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ֆինանսիայի ՀԵԼՁԻՆԳՅՈՐԾ քաղաքից մեզ
գրում են յուլիսի 7-ից հետեւալը. «Այսօրվայ
տեղական բոլոր թերթերում տպված հիւանդա-
նոցի տեղեկագրից երևում է, որ խօշորսն արդէն
մուտք է գործել և Հէլզինգֆորս: Տեղական հիւան-
դանոցում արդէն 2 հիւանդ կայ: Սակայն յայտնի
չէ՝ արդե՞ր զրանք եկողներն են, թէ տեղացիք:
Այստեղ երկիւղ ասված բանը չը կայ. ամբողջ
քաղաքը խօշորսից դիմադրելու բոլոր միջոցնե-
րով զինված պատրաստ է»:

ԵՋՄԻԱՏՆԻՑ հաղորդում են մեզ, որ Գեոր-
գեան ձեմարանի վարչութիւնը մանկավարժութեան
ուսուցիչ Սեդրակ Մանդինեանի տեղ, որն այս
տարի արձակից ձեմարանից, հրաւիրված է պ.
Յ. Տէր-Մկրտչեան: Երկուստեղ մանկավարժն իր
մասնագիտութիւնը սովորել է Գերմանիայում և
ահա երկու տարի է որ Զմիւռնիայում վարում է
հայոց դպրոցի տեսիլ պաշտօնը: Լավում է որ
Տէր-Մկրտչեան ուրախութեամբ յայտնել է իր հա-
մաձայնութիւնը Էջմիածնի ձեմարանում ուսուցիչ
լինելու:

ՓՈԹԻՅՑ մեզ գրում են. «Երկրայ յուլիս ամսի
8-ին, կարճատե հիւանդութիւնից յետոյ, վախ-
ճանկեց Փոթիի քաղաքագլուխ, գեներալ Ի. Վահ-
րամեան: Հանգուցեան երկու ամիսից ի վեր Պե-
տրոպոլիսում էր գտնվում քաղաքային այլ և այլ
գործերի համար և նոր էր վերադարձել մայրաքա-
ղաքից: Հանգուցեան շատ սիրված էր քաղաքի
բնակիչներին և Փոթի քաղաքը մեծ մա-
սամբ նրան է պարտական իր բարեկարգութեամբ:
Վերջին անգամ Պետրոպոլիս եղած ժամանակ նա
բարեխօսելով միմիտութեան մօտ, կարողացաւ
ազատել Փոթի քաղաքը կառավարութեան իր
հասանելի պարտքից: Հանգուցեանը շուտով պիտի
ձեռնարկէր քաղաքի մէջ ձանապարհների բարեկար-
գելուն և կամուրջի կառուցանելուն: Վահրամեան
ժողովրդականութիւն ունէր քաղաքում և նրան
միշտ աջողվում էր քաղաքի օգտին առանտ նուէր-
ներ ստանալու: Հանգուցեանը յուզարկաւորութեան
հանդէսը շատ փառաւոր էր. ներկայ էին երաժշ-
տական դիմուորական խումբը և մի վաշտ զին-
ւորներ: Բացի հայոց տեղական հողեկաւարնու-
թիւնից Քուրդիստանի ուղարկված էր տեղ-Յովսէփ
քահանայ, որը մի զգացված քաղաք խօսեց հաւա-
գուցեանի յիշատակին: Յուզարկաւորութեանը ներ-
կայ էր ուսու հոգեկաւարնութիւնն էլ, իր կայիս-
կալով: Նմանապէս ներկայ էին օտար տեղու-
թիւնների հիւպատոսները: Գաղաղի վրա դրվեցան
մի քանի պատկեր: Քաղաքագլուխ անձնափոխա-
նորդ պ. Մեշինարդիւս մի զգացված դաժնամական
արտասանեց դազարը գերեզման իշխանիւց յե-
տոյ»:

ՓՈԹԻՅՑ մեզ գրում են. «Այստեղ կազմված
սանիտարական յանձնախումբը եռանդով կերպով
գործում է. առաջին անգամ ման եկան քաղա-
քում և տներն այցելեցին՝ 4 բժիշկներ, մի կին-
բժիշկ, քաղաքագլուխ փոխանորդ, քաղաքային
ինժեները և դումայի մի քանի ձայնաւորներ:
Յանձնախումբը յորդորեց տանտերերին խիստ
մաքրութիւն պահպանել, ապա կարգադրեց որ
սայլերով ման անեն կիր, որը 20 կոպէկով պուդը
բաժանում են աղգարանակութեանը: Յանձնախումբը
քննեց և մշակների բոլոր բնակարանները, պատ-
ւերով որ 3—4 հոգուց աւելի չը բնակվեն մի
սենեակում: Առանձին յանձնախումբ էլ նշանակ-
ված է, որը պարտաւորութիւն ունի մասնաձառ-
ներին, մրգավաճառներին և հացթուխների վրա հրա-
կելու: Արդեւիւմ է մրգերի ծախելը, պատուիւր-
ված է բոլոր կաֆէաներին միշտ եռացրած ջուր
պահել մուշտարիների համար: Քաղաքն եկող ձա-
նապարհորդները խիստ քննութեան են ենթարկ-
վում. այս օրերս նորեկներից մի քանիսն ինչ-
դինֆէկցիայի ենթարկեցին: Թէ բժիշկները և թէ
ոստիկանութիւնը խիստ միջոցներ են ձեռք ա-
ռել: Մեր թղթակցի գրած այդ տողերին մենք
այսքան միայն կարող ենք աւելացնել. ցանկալի
է որ մեր երկրի միւս քաղաքները Փոթիից օրի-
նակ առնէին, մանաւանդ նրանից օրինակ առնէր
ողորմելի Գանձակ քաղաքը:

Գովելի է շատ ՆԵՐՔԻՆ-ԱԳՈՒՆԻՍԻ գործու-
նէութիւնը ներկայ տաղանդի ժամանակ: Այդ
ինտելեկտուալ գիւղը դիմել է երևանի նահանգա-
պետին, թոյլտուութիւն խնդրելով հիմնել իր ծախ-
սով մի դեղատուն թէ իրան և թէ չըջակայ գիւ-
ղերի համար, հրաւիրել մի ուսեալ դեղագործ և
մի բժիշկ: Նահանգապետն անմիջապէս հաճու-
թիւն տուեց աղուիցիներին այդ խնդիրը:

ԵՐԵՎԱՆԻՑ մեզ գրում են. «Խօշորսի պատճա-
ռով, որը սպաւում է երևանում էլ, արգելված է
սեխ և ձմերուկ ծախելը: Հետաքրքրի է խմանալ
ձմերուկն է առողջութեանը չիտա, թէ երևանի
հայրենիների մօտ շինված ջրհորները, որոնց մօ-
տով անցնում է Հէլզ-ու-խալի քարվանսարայի
արտաքնոցի արտաթորութիւնների ստորերկրեայ
հոսանքը. այդ արտաթորութիւնները ծծվում են
հողի և ապա ջրի մէջ և այդ ջրով է որ պատ-
րաստվում է քաղաքի հացը»:

ԵՐԵՎԱՆԻՑ գուման, ինչպէս մեզ գրում են, մի
քանի նիստեր է ունեցել, քաղաքի սանիտարական
գործը հաստատ հիմքերի վրա դնելու նպատակով:
Սակայն քաղաքային կասսան դատարկ է, իսկ
երևանեան ինքնավարութիւնը անքան քիչ հաւատ
է ներհնչում հարուստներին, որ այդ վերջիններից
ոչ մէկը չէ կամենում պարտաւոր, նոյն իսկ 100/-
ով, մի օր և է դումար տալ քաղաքին: Միայն
Գեորգեան եղբայրներն են խոստացել մի ինչ որ
գումար:

ԵՐԵՎԱՆԻՑ բժիշկ Լևոն Տիգրանեան, որը այս
ամառը Գանձակ նահանգի Հաջիբեկով ամառանո-
ցումն էր ապրում, այժմ թողել է մեր երկիրը և
Բաթումով ուղևորվել է արտասահման, Եվէյցա-
րիա:

Մեզ գրում են Երևանից, որ երկար ժամանակ
անձրևներ չը գալու պատճառով երևանի չըջակայ
անջրդի դեղերում հացը շատ քիչ է և թանկ:

Մեզ գրում են ԿՅՁՈՒՅՑ, որ ամսիս 20-ին,
երկուշաբթի երեկոյան, Երևանի քահանայ Երզն-
կեանի երգեցիկ նոր խումբը կը տայ տեղական
բաժնորդ հայկական համերգ հայկական շարերով:
Յանկանում ենք աջողութիւն:

Ստախոսութիւնը յանցանք է, իսկ ստախոսու-
թեան մէջ յամառելը՝ և յանցանք և ստորութիւն:
Եւ այդ դրութեանն է հանում յամառ «Արձա-
գանք» լրագիրը: Նա հաղորդեց մի սուտ, որ
Երբեք թէ «Ամուսնական խնդիրներ» գիրքը ներ-
կայացվել է Սահակ-Մկրտչեան մրցանակաբաշ-
խութեան և միաձայն մերժվել է: Մենք զրուշաց-
րինք «Արձագանքին», որ դա սուտ է, յայտնելով,
որ նոյն իսկ «Արեւել» լրագրի մէջ տպագրած
պաշտօնական արձանագրութեան մէջ «Ամուսնա-
կան խնդիրներ» մասին մի խօսք անգամ չը կայ:
Այժմ «Արձագանքը» փոխանակ իր արձակած
բաղը յետ կոչոււ, համարձակութիւն ունի ն էյ-
նի միւսեր անել, ասելով թէ ինքը մասնաւոր
նամակով է տեղեկութիւն ստացել: Ասենք թէ ու-
րիշ կերպ չէ էլ կարելի սպասել Քրտուայի և Ե-
դիպոստի արժանաւոր պատգամաւորից»:

Ինչպէս հաղորդում են Մոսկվայի լրագիրները,
յուլիսի 24-ից մինչև յուլիսի 1-ը Մոսկվայում
մեռել են ստամոքսի և աղիքների սաստիկ ցուցից
304 մարդ»:

Մտադրութիւն կայ թիֆլիսում Ալեքսանդրեան
այգիում բանալու ձրի ճաշարան ժողովրդի
համար:

Ռուսաստանում կառավարութիւնը ամեն ա-
խիստ միջոցների է դիմում ժողովրդի մէջ ծա-
ղող խռովութիւնների առաջն առնելու համար:

Մի քանի նահանգապետներին տրված են արտա-
կարգ իրաւունքներ՝ խռովարդներին պատժելու
համար:

Թիֆլիսում վերջին օրերս այս տարի չը տեսն-
ված չըք է սկսվել:

Մեզ հաղորդում են, որ մինչև այժմ թիֆլիսից
դուրս գնացած կը լինի մօտ 50 հազար ժողո-
վուրդ: Մասաներ, խոհարարներ, մշակներ և զա-
նազան արհեստավոր պարագաղ գաւառացիք մեծ
պատճառով այդ տեսակ մարդկանց մեծ պակա-
սութիւն է զգացվում քաղաքում:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԼՐԱԳՐԱԿԱՆ ՀԵՏԱԳՐԱԾԱՐԺ ԴԱՏ

Արտասահմանային մի հայոց լրագրում կարգում ենք հետևելը.

«Անցեալ հոկտեմբերին Մարտիկի մէջ «Etoile de Bosphor» անունով հակաթուրք մի թերթիկ սկսաւ հրատարակել ֆանսիօնի լեզուով որ սակայն մի քանի շաբաթի կեանք ունեցաւ միայն: Թերթիկն խմբագիրը որ երբեմն Սուլթանի պալատին մէջ պաշտօն կը վարէր, իր այդ թերթով կը սպառնար պալատի այլ և այլ գաղտնիքներ ալ երևան հանել որոնք կրնային վնաս հասցունել սուլթանի շրջակայք բնող անձերին: Խմբագիրը կը պահանջէր թերթը կառավարութեան համար իր ըրած այլ և այլ ծախքերի համար և իր պատուի դէմ անարդարեւ եղած է ասելով: Պարէն եկած մի հրահանգի վրա Մարտիկի հիւպատոսը 4,000 ֆրանքի մօտ մի առհաշիւ վճարը արած էր յիշեալ խմբագիրն որ աղոր վրա հանեցաւ թերթը դադարեցնելու, սակայն մի անգամ գումարն ալ պահանջեց սպառնալիս մի գրութիւն ուղղելով հիւպատոսին թէ սուլթանի պալատին մասին իր գիտածները պիտի հրատարակէ «Բարակեօղլանա» անունով մի գրքի մէջ: Հիւպատոսը այդ սպառնալիս գրութիւն յանձնեց Մարտիկի ռճարատ ատենի ընդէ. դատարանային և աղոր վրա խմբագիրը դատի ենթարկուեցաւ: Անցեալ շաբաթ ուրախ օրը վերջին անգամ լինելով այդ դատ յիշեալ ատենին ներկայացաւ ամբաստանվածի փաստաբանը առարկեց որ ֆրանսական դատարան մը անձեռնհաս է այդ խնդրի քննելու քանի որ վատահամբաւու ալ սպառնալիքը տեղի ունեցած է թրքական հողի վրա, սակայն ընդէ. դատարանը պատասխանեց թէ օտար տէրութիւններին ներկայացուցիչները պաշտօնատեղերը թէ և անդամարարելի են և ֆրանսական հողին դուրս կը համարեն, սակայն հիւպատոսութիւնը դեպքանական-դիւանագիտական գործակալութիւն մը չէ, այլ առևտրական որի միայն ներկայութիւնը թույլատրւած է ֆրանսական հողին վրա, ուստի և հիւպատոսարանները անըտարարելի չեն և ոչ ալ ֆրանսական հողին բաժնւած:

«Գառաւորները 1/3 ժամի խորհրդակցութիւնէ մ'ետք վճռեցին որ դատարանը ձեռնհաս է նոյն գործը քննելու և միանգամայն խմբագիրը դատարանային դատական ծախքերը վճարելու և 3 ամիս բանտարկութեան, վճար գործադրութիւնը անորոշ պայմանաժամով յետաձգելով:»

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՌԵՐ

—Վիեննայում պաշտօնապէս յայտարարւած է, որ այն մասնաւոր բժիշկները այրները և որբերը, որոնք պատրաստականութիւն կը յայտնեն խօշրային բժիշկները պարտաւորութիւնները յանձն առնել, իրաւունք կունենան թողալ և օգնութիւն տալու, պետական ծառայութեան մէջ դառնալով բժիշկներին նման: Մի և նոյն ժամանակ յայտարարւած է, որ այդպիսի բժիշկներին առաւելութիւն կը տրուի պետական ծառայութիւն մտնելու ժամանակ: Վիեննայի բժիշկներից շատերը արդէն պատրաստականութիւն են յայտնել ծառայելու հասարակական հիւանդանոցներում:

—Ներկայ ամսի երկրորդ կեսին գնալու են Լոնդոն լորդ Սոլսբերի և Գլազգոն:

—Թէհրանից ստացւած տեղեկութիւններն համեմատ, յունիսի 30-ին Արդեբիլում մեռել են խօշրայից 18 հոգի, յուլիսի 1-ին էլի անտեղ մեռել են 31, Սեւեղում 3, Սեղաւարում 6, Բէշտում 2, Էնդեղում 1 հոգի: Յուլիսի 2-ին Մեշեղում մեռել են 3, Բէշտում 3, Էնդեղում 1 հոգի, յուլիսի վերջը խօշրայ երկաց Դերեգէզ խանութեան մէջ:

—Միլանից հեռագրում են, որ Հռոմի ֆրանսիական դեսպանը տեղեկացրեց Ջիօլետտի միմիտին թէ շուտով ֆրանսիական նաւատորմը այցելելու է Ջէնովա:

—«Köln. Zeit.» լրագիրը հաղորդում է, որ համաշխարհային ցուցահանդէսը, երբի, չի կայանայ, որովհետեւ գերմանական արդիւնաբերողները

հաւատացնում են, թէ դա կը վնասէ իրանց շահերին:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՄԻՍՏԻՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒԳ, 15 յուլիսի: Առանձին մասնաժողովը յուլիսի 1-ից մինչև 15-ը ստացել է 13,974 թուրքի:—Վերջին տեղեկութիւններին նայելով խօշրայից էլի մեռան Կովկասում 616, Դոնի շրջանում 261, Աստրախանի նահանգում 202, Սամարայի 161, Անդրկասպեան երկրում 115, Սարատովում 52, Սամարայի նահանգում 26, Նիժնեգորոնեան 12, Կազանի 12, Վորոնեժ-Քասովեան գծի վրա 9, Վորոնեժում 1:—«Jour. de St. Pet.» լրագիրը կրկին անգամ մատնանիշ է անում արտասահմանեան այն անհեթեթ լուրերի վրա, որոնք վերաբերում են այն բանին, որ իբրև թէ Բելգիկի գործի քննութեան ժամանակ գտնված են ռուսաց դոկումենտներ:—«Новое Время» լրագիրը հաղորդում է, որ Պետերբուրգում հոկտեմբերին բացվում է նոր դպրոց, այն է դիմադրական էլէկտրո-տեխնիկների ինստիտուտ:

ՆԻՃՆԻՑՆՕՎԳՈՐԴ, 16 յուլիսի: Նիժնեգորոնեան տնտեսաձեռք պաշտօնապէս բացված է: Օտարաբաղաւորի վաճառականները առ այժմ չեն եկել. ապրանքը գալիս է բանդուրներով պակասութիւն է բանում են կալանաւորները և հասարակական աշխատանքներին մասնակցող դիւղայիք: Յոյս ունեն, որ ճգնաժամը ժամանակաւոր բնաւորութիւն ունի:

ՏԱՇԿԵՆՏ, 16 յուլիսի: «Турк. Вѣдомости» լրագիրը լուր է հաղորդում, որ աշանը կը սկսեն հետազոտութիւններ անել՝ երկաթուղու գծի անցկացնելու: Սամարկանդից մինչև Տաշկենտ՝ գնահատու Վնենկովի դեկալարութեամբ, ճանապարհը կը շինվի երեք տարվայ ընթացքում: Արդէն ինժեներները ճանապարհ ընկան Տաշկենտ:

ՍՈՅՅԱ, 16 յուլիսի: Երէկ առաւօտեան 5 ժամին մահվան պատճի ենթարկուեցին Միլարով Ալէքսանդր Կարաբուլով, Պոպով և Գեդիկով: Մահվան պատճի տեղի ունեցաւ բանտային բազում, ուր կառուցված էր մեծ կախաղան: Նորս թողնելով, դատաւարութեանը լուրջեցում էին քահանաներ, դատաւարութեանը արիւթեամբ էին վերաբերում դէպի իրանց վիճակը: Երբ կարգացին մահվան վճիռը, Կարաբուլովը զոչեց. «Կեցցէ Մակեդոնիան», իսկ մնացած երեքը զոչեցին՝ «Կեցցէ Բուլղարիան»: Պատճին ներկայ էին բերդապետը, դիմադրական պրօկուրորը, դատաւարական պրօկուրորը, բժիշկները, հասարակական իշխանութեան ներկայացուցիչները և դատաւարութեանը ազգականները: Գատապարտվածների մարմինները թաղվեցան գերեզմանատանը:

ՊԵՏԵՐԲՈՒԳ, 16 յուլիսի: Իբրև ժամանակաւոր միջոց, մինչև 1893 թվի յունիսի 1-ը՝ միմիտարական մասնաժողովը վճռել է առաջադրել ներքին գործերի միմիտարին, անկարգութիւնները և ժողովրդական յուրմուծների ժամանակ փակել մաս մաս ոգելից խմիչքներ վաճառող առանձին հիմնարկութիւնները:—Պալատայի նահանգի, Կոնստանտինոպոլիտեան գաւառի Պետրովկա և Պոպովկա գիւղերը խօշրայով վարակել են Կուբանեան շրջանից եկած բանդուրները: Մինչև յուլիսի 12-ը մեռել են 16 մարդիկ. նոր հիւանդութիւններ չեն եղել: Կուբակ-Խարկով-Աղովեան երկաթուղու գծի վրա մեռան 14 բանդուրներ, որոնք վերադառնում էին հարաւից. տեղացիներ չեն հիւանդացել: Օրկնորդական գաւառում մեռան 10 մարդ: Խօշրայով վարակված միւս տեղերում էլի մեռան 1,668 մարդիկ:

ԲԵՐԼԻՆ, 16 յուլիսի: Արդեւած է Ռուսաստանից ներմուծել հին չորեր և աղիտակղէն, մրդեր, բանջարեղէն և պանրեղէն:

Խմբագիր-Հրատարակող՝ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Չորեքշաբթի, ամիս 22-ին, երեկոյան ժամի 8-ին քաղաքային խորհրդի դահլիճում նշանակված է ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԸ:

Պարապման առարկայ՝ ներկայ համաձայն խօշրայի միջոցին ժողովրդին օգնութեան հասնելու առաջարկութեան քննութիւնը: (Ն 80) 1—2

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԳ ցանկանում է պաշտօն ունենալ խանութներում, կամ գործարաններում և գրասենականներում:

Գիտէ լաւ հայերէն հաշուապահութիւն, նոյնպէս և տաճկերէն: Հասցէն, Авлабартъ, Вахтангская улица, № 17. (Ն 80) 1—3

Ինձ հետ զրակցողներից խնդրում եմ իրանց թղթերը, հեռագրերը ուղարկել Ալէքսանդրօպօլ մինչև օգոստոսի վերջը, այնուհետեւ՝ Երևան: 1—3 (Ն 80) Թեմական տեսուչ՝ ՄԵՍՐՈՊ ՔԱՀԱՆԱՅ ՄԵԼԵԱՆՑ

ԱՐԴԱՀԱՆԻ ԵՐԿՍԵՆ ՄԻԿԱՍԵԱՆ ԳՊՐՈՑԻ համար հարկաւոր է մէկ ուսուցիչ և մէկ վարժուհի (ամուսիններ, կամ քոյր և եղբայր), վարժուհին կը պարապի և ձեռագործի դասեր, զրանցից մէկը պէտք է ունենայ Դ. կամ Ե. ռուսաց լեզուի արտօնագիր, նոյնպէս հարկաւոր է երգեցողութեան ուսուցիչ, որը և երգեցող պէտք է կրի դպրոցի պաշտօնը: Ցանկացողները թող շտապեն դիմել հոգաբարձութեան: (Ն 80) 1—3

ՖԻՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳԻՆՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ MESSAGERIES MARITIMES (ՄԵՍԱՃԸՐԻ ՄԱՐԻՏԻՄ)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ԼՈՆԴՈՆԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ երեքշաբթի, 21 յուլիսի (2 օգոստոսի), դուրս կը գնայ ԲԱԹՈՒՄԻՑ LA MANCHE (ՄԱՆՇ) նաւը, նաւապետ BLANC (ԲԼԱՆԿ) դէպի Կ. Պոլիս, Մարսէլ, Հաւր, Լոնդոն, մտնելով և միջանկիւղ նաւահանգիստները:

Ազգանները՝ ԲԱԹՈՒՄԻՄ՝ ՄԱԼԱՎԱՋԻ, ԹԻՖԼԻՍԻՄ՝ ՀԵՋՈՒԲԵԱՆՑ, Իսկ ԲԱԳՈՒԻ մէջ՝ ԳՈՂՎԱՌՍՏ: (Ն 23) 1—2

ԵՐԵՒԱՆԻ ԹԵՄԱԿԱՆ ԳՊՐԱՆՈՑԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆԸ հրաւիրում է ՄԻ ՀԱՄԱՐԱՆԱԿԱՆ ուսուցիչ Մաթեմատիկայից, 22 դասի համար, 50-ական ընդլի դասարանի մի ուսուցիչ առաջին նախաընթացի 18 դասի համար, տարեկան 400 ընդլի ռոճկով, նոյնպէս մի անձն զարանցի վերակացութեան և հոգաբարձական քարտուղարի պաշտօնը վարելու համար, տարեկան 400 ընդլի ռոճկով: Ցանկացողները պէտք է դիմեն հոգաբարձութեանը մինչև օգոստոսի մէկը. Զրահան, въ Армянскую Семинарію. (Ն 79) 2—3

Հարկաւոր է մի ՈՒՍՈՒՑԻՉ և մի ՈՒՍՈՒՑՉՈՒՅԻ Թէհրանի Ազգային երկսեռ դպրոցների համար: Ցանկացողները թող դիմեն բանակցելու և պայմանները իմանալու պ. Համբարձում Առաքելեանին, այս հասցեով՝ ДИЛИДЖАНЪ, Амб. Аракел-янычу. (Ն 79) 2—3

Թափրիզի Լիւաւայ Թաղի համար հարկաւոր է մի վարժուհի կար ու ձեռի կամ ձեռագործութեան և հայոց լեզուի համար և մի ուսուցիչ՝ ռուսաց լեզուի և թուրքա-նոթեան համար: Ցանկացողներին խնդրում ենք դիմել Յոնան Գալթեանին, Միքայէլեան փողոց, № 52, բնակարան Մատինեանցի: (Ն 75) 4—5

ՄԱՐՊԻՆԿԱՆԵՐԻ ՄԱԳԱԶԻՆ

Թիֆլիս, Սոլջակիայա փողոց, տուն Աղաբաբօվի, Ամառնային գործնական հիւսուածքներ, ձեռքի պատրաստութեան՝ տիկիների զգեստների, մանուկների զգեստների և պարոնների շապիկների համար:

Մեծ ընտրութիւն լայն սարպիկաների՝ նախշով: Սարպիկայի դուրանների թեր, սալա, գոյնգոյն: Ներկերը տեղական են: Սարպիկայի զգեստներ արկղներում 3 ընդլից սկսած մինչև 60 կօպէկ: Սարպիկայի իւրկաներ 1 ը. 80 կ. և աւելի թանկ: Սարպիկայի քթի աղուկներ և զլիթ թաշկինակներ:

ՖԱՐԻԿԱՆՏՆԵՐ ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ՏԱՆ ԲԵՆԴԵՐ ԵՒ ՍՏԵՊԱՆՕՎ (Ն 47) 24—30

ԱՏԱՄՆԱՐՈՑԻ Հ. Յ. ՕՐԲԵԼԻ

Սոլջակիայա փողոց, սեփական տանը № 15—16 ԸՆԴՈՒՆՈՒՄ Ե ՀԻԱՆԳՆԵՐԻՆ Առաւօտեան 12 ժամից մինչև 2 ժ. և երեկոյան 5 ժամից մինչև 7 ժ. Կիրակի և տոն օրերին առաւօտեան 8 ժամից մինչև 2 ժամ կէսօրից յետոյ: (Ն 145) 69—150

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԻԳԱԿԱՆ ՊՐՈՑԵՍԻՍՈՆԱԼ ԱՐՀԵՏԱՆՈՑԻ ԱՐՀԵՏԱԳԻՏԱԿԱՆ ԵՐԵԿՈՑԵԱՆ ԴԱՍԵՐ.

- 1) Հանդերձների և սպիտակեղէնի ձեռի դասեր Գլոգլինսկու մեթօդով և Շէդդեր ֆրանսիական մեթօդով:
 - 2) Կարի դասեր մօդային ժուրնալներով:
 - 3) Հարթակարի և զանազան ձեռագործների դասեր:
 - 4) Դասեր տարրական և ծխական դպրոցների ուսուցչուհիներ պատրաստելու համար:
- Վճարը ամսական 2 ընդլի. երկու անգամ շաբաթը 5-ից մինչև 7 ժամը երեկոյան: Տարրական և ծխական դպրոցների ուսուցչուհիները կարող են այցելել դասերը ձրի: (Ն 23) 40—40